

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

4.1. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.1.1. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-նոյեմբերին, փաստացի գներով, կազմել է 566292.6 մլն. դրամ կամ 1050.4 մլն. դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 141115.0 մլն. դրամ (261.9 մլն.դոլար) և ներմուծումը՝ 425177.5 մլն. դրամ (788.5 մլն.դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 284062.5 մլն.դրամով (526.6 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնության կարգով ստացված բեռների՝ 256014.3 մլն.դրամով (467.4 մլն.դոլարով):


2000թ. հունվար-նոյեմբերին, 1999թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 12%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 23.4%-ով, իսկ ներմուծումը՝ 8.6%-ով: Բացասական առևտրային հաշվեկշիռն աճել է 2.5%-ով: Արտահանման ծավալը 2000թ. նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ նվազել է 7%-ով, իսկ ներմուծումն աճել 20.6%-ով:

2000թ. հունվար-նոյեմբերին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 115756.5 մլն.դրամ (215.3 մլն.դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 20.5%-ը (1999թ. հունվար-նոյեմբերին՝ 23.6%), իսկ այլ երկրների հետ՝ 450536.1 մլն. դրամ (835.1 մլն. դոլար) կամ 79.5%-ը (1999թ. հունվար-նոյեմբերին՝ 76.4%), որից Եվրոմիության(ԵՄ) երկրների հետ՝ 199422.9 մլն. դրամ (370.6 մլն. դոլար) կամ 35.3%-ը (1999թ. հունվար-նոյեմբերին՝ 34.6%):


2000թ. հունվար-նոյեմբերին ԱՊՀ երկրներ են արտահանվել 34922.9 մլն. դրամի (64.7 մլն. դոլարի) և ներմուծվել՝ 80833.6 մլն. դրամի (150.6 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 45910.7 մլն. դրամով (85.8 մլն. դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 106192.1 մլն.դրամի (197.2 մլն.դոլարի), իսկ ներմուծվել՝ 344344 մլն. դրամի (637.9 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 238151.8 մլն. դրամով (440.7 մլն.դոլարով):

1999թ. հունվար-նոյեմբերի համեմատ 2000թ. հունվար-նոյեմբերին ապրանքների արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 26.6%-ով:Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 22.4%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից նվազել է 11.5%-ով, իսկ այլ երկրներից աճել է՝ 14.8%-ով:

Արտահանման և ներմուծման ծավալները 1999 և 2000թթ. հունվար- նոյեմբերին, ըստ ԱՊՀ և այլ երկրների Արտահանում (մլն. դոլար)



Ներմուծում (մլն. դոլար)



Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	ԱՐՏԱՅԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը, հազ. \$
	Արժեքը		Տեսակ. կշիռը	Արժեքը		Տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
ԸՆԴԱՄԵՆԸ	141115.0	261912.8	100.00	425177.5	788499.1	100.0	-526586.30
որից`							
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	34922.9	64730.1	24.71	80833.6	150588.7	19.10	-85858.63
այդ թվում`							
Ռուսաստան	21630.8	39988.1	15.27	62638.4	116737.1	14.80	-76749.05
Թուրքմենստան	2898.0	5373.8	2.05	531.3	988.9	0.13	4384.86
Վրաստան	6973.2	12998.3	4.96	10132.1	18886.5	2.40	-5888.26
Բելոռուս	430.7	797.2	0.30	292.2	542.9	0.07	254.27
Ուկրաինա	1545.7	2891.7	1.10	5979.3	11082.2	1.41	-8190.49
Ղազախստան	628.6	1163.2	0.44	433.5	807.8	0.10	355.46
ԱՊՀ այլ երկրներ	815.9	1517.8	0.58	826.8	1543.2	0.20	-25.42
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	106192.1	197182.7	75.29	344344.0	637910.4	80.90	-440727.67
այդ թվում`							
ԵՄ երկրներ	52894.6	98381.6	37.56	146528.3	272213.0	34.52	-173831.34
Ավստրիա	4.7	8.6	0.00	1274.3	2364.2	0.30	-2355.53
Բելգիա	37823.8	70387.5	26.87	42685.2	79429.5	10.07	-9042.02
Ֆրանսիա	225.4	417.6	0.16	8318.6	15396.4	1.95	-14978.80
Գերմանիա	6154.6	11442.8	4.37	16719.8	31052.6	3.94	-19609.85
Իտալիա	1288.0	2387.2	0.91	12498.1	23225.3	2.95	-20838.10
Նիդերլանդներ	1134.3	2092.0	0.80	6378.9	11935.5	1.51	-9843.46
Սեծ Բրիտանիա	4785.0	8902.7	3.40	28257.1	52290.7	6.63	-43388.01
Հունաստան	1423.8	2641.9	1.01	25244.0	46964.3	5.96	-44322.44
Իռլանդիա	0.2	0.3	0.00	554.4	1026.9	0.13	-1026.61
Ղանիա	0.0	0.0	0.00	700.3	1306.9	0.17	-1306.88
ԵՄ այլ երկրներ	54.8	101.1	0.04	3897.6	7220.7	0.92	-7119.64
Շվեյցարիա	4295.2	7961.5	3.04	11643.0	21495.0	2.73	-13533.50
Իրան	13820.9	25649.7	9.79	39648.6	72300.0	9.17	-46650.30
Թուրքիա	663.8	1230.0	0.47	19476.3	36103.4	4.58	-34873.40
Միաց. Արաբական Եմիրաթ.	2712.0	5021.2	1.92	19682.6	36499.1	4.63	-31477.87
ԱՄՆ	14744.4	27309.6	10.43	46056.2	85424.0	10.83	-58114.36
Բուլղարիա	276.7	511.1	0.20	3589.0	6647.6	0.84	-6136.46
Այլ երկրներ	16784.5	31117.8	11.88	57719.9	107228.3	13.60	-76110.44

2000թ. հունվար-նոյեմբերին արտահանման ծավալի 24.71%-ն ուղղվել է ԱՊՀ երկրներ (այդ թվում 15.27%-ը՝ Ռուսաստանի Դաշնություն, 4.96%-ը՝ Վրաստան և 4.5%-ը՝ ԱՊՀ մյուս երկրներ), 75.29%-ն աշխարհի այլ երկրներ, այդ թվում 37.56%-ը՝ ԵՄ երկրներ (որից 26.87%-ը՝ Բելգիա, 4.37%-ը՝ Գերմանիա, 3.4%-ը՝ Սեծ Բրիտանիա), 9.79%-ը՝ Իրան և 10.43%-ը՝ ԱՄՆ:

Ներմուծման ծավալի 19.1%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 14.8%-ը՝ Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 80.9%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում 34.52%-ը՝ ԵՄ երկրներին (որից 10.07%-ը՝ Բելգիային, 6.63%-ը՝ Մեծ Բրիտանիային), 10.83%-ը՝ ԱՄՆ-ին, 9.17%-ը՝ Իրանին և 4.58%-ը՝ Թուրքիային:

2000թ. հունվար-նոյեմբերի արտահանման և ներմուծման ծավալներն ու տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի¹

(ըստ բեռնամաքային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների)

Մարզի /քաղաքի անվանում	Արտահանում			Ներմուծում		
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով
	մլն.դրամ	Հազ. \$		մլն.դրամ	Հազ. \$	
Ընդամենը	137844	255860.0	100.0	404438	749945.5	100.0
ք.Երևան	82156.6	152443.6	59.58	306166.6	567663.4	75.69
Արագածոտն	596.5	1110.6	0.43	1380.9	2572.6	0.34
Արարատ	3192.7	5932.9	2.32	5967.0	11036.2	1.47
Արմավիր	424.4	784.0	0.31	3933.6	7258.7	0.97
Շիրակ	686.4	1268.5	0.50	7070.4	13105.2	1.75
Վայոց Ձոր	176.6	329.9	0.13	1157.6	2142.3	0.29
Տավուշ	129.3	237.6	0.09	132.5	245.5	0.03
Սյունիք	7726.6	14304.5	5.59	19263.9	35736.5	4.77
Գեղարքունիք	1436.6	2650.6	1.04	1571.1	2904.1	0.39
Լոռի	2802.7	5168.2	2.02	6838.0	12693.9	1.69
Կոտայք	38515.9	71629.6	28.00	50956.0	94587.1	12.61

2000թ. հունվար-նոյեմբերի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 71.6%-ը (արտահանումը՝ 59.6%, ներմուծումը՝ 75.7%) իրականացվել է Երևան քաղաքում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից, 16.5%-ը՝ Կոտայքի մարզի, 5.0%-ը՝ Սյունիքի մարզի կազմակերպությունների կողմից: Հանրապետության մյուս մարզերում արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը, համապատասխանաբար չի գերազանցել 2%-ը:

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը

Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-նոյեմբերին, ըստ առանձին ապրանքախմբերի

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվե-կշիռը, հազ. \$
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	141115.0	261912.8	100.00	425177.5	788499.1	100.00	-526586.3
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	312.9	579.4	0.22	15861.2	29451.0	3.74	-28871.61
Բուսական ծագման արտադրանք	886.6	1635.8	0.62	46456.5	86234.9	10.94	-84599.09
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.2	0.3	0.00	8447.0	15698.3	1.99	-15697.94
Պատրաստի սննդի արտադրանք	12747.9	23578.9	9.00	33505.6	62121.8	7.88	-38542.91
Հանքահումքային արտադրանք	16171.2	30024.4	11.46	87752.4	161910.3	20.53	-131885.91
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1687.4	3151.6	1.20	37177.9	69024.2	8.75	-65872.62

¹ Արտահանման և ներմուծման ծավալների բաշխումը մարզերի իրականացվել է ըստ կազմակերպությունների տնտեսական գործունեության իրականացման վայրի՝ «Վետեկամուտների նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա»:


	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			
	Ա Ր Ժ Ե Ք Ն			Արժեքը			
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	4620.3	8550.7	3.26	10946.8	20270.0	2.57	-11719.30
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	656.9	1216.6	0.46	767.0	1418.4	0.18	-201.75
Փայտ և փայտյա իրեր	405.6	749.5	0.29	2424.0	4494.2	0.57	-3744.62
Թուղթ և քղթից իրեր	210.2	387.9	0.15	11466.4	21240.3	2.69	-20852.42
Մանածագործական իրեր	6316.3	11692.2	4.46	15678.2	29038.3	3.68	-17346.16
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	482.2	891.4	0.34	2592.7	4802.4	0.61	-3911.01
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	1057.7	1978.7	0.76	5505.2	10192.2	1.29	-8213.46
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	59911.7	111358.9	42.52	56271.6	104540.8	13.26	6818.12
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	21488.2	39887.5	15.23	11838.2	21931.9	2.78	17955.59
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	11531.2	21349.5	8.15	56141.1	104483.3	13.25	-83133.80
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	898.6	1674.4	0.64	11310.9	21074.7	2.67	-19400.29
Սարքեր և ապարատներ	1075.9	1998.5	0.76	5585.6	10430.0	1.32	-8431.54
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	534.7	985.2	0.38	5426.4	10099.3	1.28	-9114.15
Արվեստի ստեղծագործություններ	119.4	221.2	0.08	22.9	42.6	0.01	178.58

2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 42.5%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 15.2%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (որի շուրջ 42%-ը կազմում է ոչ թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը), 11.5%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 9.0%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 4.5%-ը՝ մանածագործական իրերը, 8.2%-ը՝ մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 24.5%, հանքահումքային արտադրանքը՝ 20.5%, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 13.3%, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 13.3%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքը՝ 8.8%:

Հարկ է նշել, որ 2000թ. հունվար-նոյեմբերին արտահանման կառուցվածքում տեղի են ունեցել զգալի դրական տեղաշարժեր: Արտահանման ծավալում, առանց ոչ թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի արտահանման և դրսից բերված հումքի վերամշակումից ստացված ապրանքների վերաարտահանման ծավալների, գրանցվել է սեփական արտադրության ապրանքների արտահանման ծավալի զգալի աճ: Միայն սեփական արտադրության ապրանքների, արտահանման ծավալը 2000թ. հունվար-նոյեմբերին 1999թ. հունվար-նոյեմբերի համեմատ կազմել է մոտ 120.0 տոկոս, այն դեպքում, երբ 1999թ. նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը կազմել էր 99.0 տոկոս:

Արտահանման ծավալի գրաֆիկական պատկերն առանց վերը նշված գործոնների և դրանց առկայությամբ 1997-2000թթ. հունվար-նոյեմբերին

մլն. դոլար



2000թ. հունվար-նոյեմբերին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն երեք ապրանքախմբերի գծով, հիմնականում՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում՝ 17955.6 հազ. դոլար, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի, ոսկերչական իրերի խմբում՝ 6818.12 հազ.դոլար և արվեստի ստեղծագործությունների խմբում՝ 178.6 հազ. դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 167711.6 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով՝ 131885.9 հազ. դոլար:

Արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերը 2000թ. հունվար-նոյեմբերին 1999թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ, ըստ ապրանքախմբերի

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	1999թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	աճի տեմպը (%)	1999թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	212195.1	261912.8	123.43	725763.8	788499.1	108.64
այդ թվում՝						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	518.8	579.4	111.67	35100.7	29451.0	83.90
Բուսական ծագման արտադրանք	1330.5	1635.8	122.95	61917.5	86234.9	139.27
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	9.1	0.3	3.55	15574.6	15698.3	100.79
Պատրաստի սննդի արտադրանք	14156.2	23578.9	166.56	68779.8	62121.8	90.32
Հանքահումքային արտադրանք	36769.4	30024.4	81.66	160665.9	161910.3	100.77
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1592.2	3151.6	197.94	67256.1	69024.2	102.63
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	8546.9	8550.7	100.04	21549.9	20270.0	94.06
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	940.0	1216.6	129.43	1298.4	1418.4	109.24
Փայտ և փայտյա իրեր	297.5	749.5	251.92	3404.7	4494.2	132.00
Թուղթ և թղթից իրեր	959.8	387.9	40.41	16570.9	21240.3	128.18
Մանածագործական իրեր	12591.7	11692.2	92.86	27766.2	29038.3	104.58

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	1999թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	աճի տեմպը (%)	1999թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-նոյեմբեր, հազ. \$	
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	959.5	891.4	92.90	5091.3	4802.4	94.33
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	703.8	1978.7	281.16	11614.9	10192.2	87.75
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	89722.3	111358.9	124.12	80534.4	104540.8	129.81
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	22521.2	39887.5	177.11	22234.6	21931.9	98.64
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	15957.8	21349.5	133.79	74246.9	104483.3	140.72
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	2600.5	1674.4	64.39	30462.4	21074.7	69.18
Սարքեր և ապարատներ	1483.8	1998.5	134.69	10956.3	10430.0	95.20
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	300.4	985.2	327.99	10711.2	10099.3	94.29
Արվեստի ստեղծագործություններ	233.7	221.2	94.67	26.8	42.6	158.78

Նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատ արտահանման ծավալի աճ է տեղի ունեցել հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի (24.1%-ով), քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի (97.9%-ով), պատրաստի սննդի արտադրանքի (66.6%-ով), մեքենաների և սարքավորումների(33.8%-ով), սարքերի ու ապարատների(34.7%-ով) ապրանքախմբերի գծով: Միևնույն ժամանակ, 18.3%-ով նվազել են հանքահումքային արտադրանքի, 7.1%-ով՝ մանածագործական իրերի արտահանումը:

1999թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ 1.3 անգամ աճել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, 1.39 անգամ բուսական ծագման արտադրանքի, 1.4 անգամ՝ մեքենաների և սարքավորումների ներմուծումը: Միևնույն ժամանակ, 9.7%-ով նվազել են պատրաստի սննդի արտադրանքի, 30.8%-ով՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 4.8%-ով՝ սարքերի ու ապարատների, 5.9%-ով՝ պլաստմասսայի և դրանցից իրեր, կաուչուկի և ռետինե իրերի ներմուծումը: